16—18-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ *(հոդվածների ժողովածու), ՀԽՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1988, 228 էջ։*

Հայ դաղթավայրերի պատմությանը նվիրվել են բազմաթիվ հետաքրքիր ուսումնասիրություններ։ Բնական է, որ սկզբում պատմաբանների աշխատանքը պետք է ընթանար առանձին դաղութների հետազոտման ճանապարհով։ Սակայն կուտակված գիտական նյութը հնարավորություն է ընձեռում դաղթավայրերի կամ գոնե դրանց ռեգիոնալ խմբերի օրինաչափությունների համադրական քննության համար։ Այդպիսի աշխատանք է գրախոսվող ժողովածուն, որտեղ փորձ է արվում դիտարկել հայկական գաղթավայրերի պատմությունը որոշակի կտրվածքով՝ թուրքական և պարսկական լծի դեմ հայ ազատագրական պայքարի տեսանկյունով։

Ժողովածուի առաջաբանում ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ Վ. Բ. Բարխուդարյանը, հետադարձ հայացք նետելով դաղութահայության պատմության ուսումնասիրման ամբողջ պրոցեսի վրա, ներկայացնում է դրա հիմնական փուլերը, իրավացիորեն նշելով, որ «միայն 1950-ական թթ. կեսերից գաղափարական աշխատանքներում եղած թերությունները վերացնելու, անհատի պաշտամունքի քննադատության շնորհիվ ստեղծված բարենպաստ մթնոլորտում, հնարավորություն ստեղծվեց անդրադառնալ պատմագիտության կողմից անտեսված շատ պրոբլեմների, շրջադարձ կատարվեց նաև դեպի գաղութահայության պատմության հարցերը». 20-ական թվականներին Հայաստանում առկա էր և՛ քաղաքական, և՛ գիտական հետաքրքրություն հայկական սփյուռքի հանդեպ, սակայն այն կասեցվեց ստալինիզմի ժամանակաշրջանում և նորից կյանքի կոչվեց անհատի պաշտամունքի մերկացման խրուշչովյան քաղաքականության տարիներին ու շարունակվեց մինչև մեր օրերը։ Հայ գիտնականների կատարած մեծ աշխատանքի արդյունքը եղավ այն, որ սկսվեց ստեղծվել հայ գաղթաշխարհի պատմությունը և պատմական դիտությունը հարստացավ բազմաթիվ արժեքավոր աշխատություններով։

Գրախոսվող ժողովածուի հոդվածների զգալի մասը վերաբերում է ռուսահայ գաղթօջախներին։ Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Վ. Կ. Ոսկանյանի՝ «Հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման սկզբնավորման պատմությունից (15—18-րդ դդ. սկիզբ)» հոդվածը։ Հեղինակի ուսումնասիրությունները հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման չ՝երաբերյալ վաղուց հայտնի են ընթերցողին։ Սույն հոդվածը գիտնականի՝ տասնամյակների ընթացքում կատարած որոնումների և ուսումնասիրությունների արդյունքն է։ Հետևելով հայ-ռուսական պատմական կապերին, Վ. Ոսկանյանը իր հայտնաբերած բազմաթիվ նորահայտ աղբյուրների հիման վրա հանդում է այն համոզիչ եզրակացությանը, որ հայ ազատագրական շարժման ռուսական կողմնորոշման ձևավորման պրոցեսը «սկսվել է 15-րդ դարի կեսից, ծավալվել 16—18-րդ դարերում, դառնալով համաժողովրդական քաղաքական ծրագիր» (էջ 21—22)։

Հայ ընթերցողին և պատմաբաններին հայտնի են նաև Վ. Ա. Խաչատրյանի ուսումնասիրությունները՝ նվիրված Աստրախանի հայ գաղութի պատմությանը։ Ժողովածուում հրապարակած նրա հոդվածը՝ «Հայ ժողովրդի ազատագրական շարժումները և Աստրախանի հայ գաղութը 18-րդ դարում», կառուցված է արխիվներում և հատկապես Մաշտոցի անվան Մատենադարանում հեղինակի ուսումնասիրած արխիվային նոր նյութերի հիման վրա և այդ տեսակետից չափազանց ուշագրավ է։ Գաղութի կյանքին և պատմությանը վերաբերող բազմաթիվ ազգային և սոցիալական գործոնները առանձին վերլուծելով, նա դրանք գիտում է կապի մեջ և գտնում, որ Աստրախանում տեղի է ունեցել մի շարք պատմական, տնտեսական, քաղաքական, կրոնական և այլ «գործոնների բարենպաստ զուգակցում» (էջ 140), որով Աստրախանի հայ գաղթօջախը որակապես տարբերվել է մի շարք այլ գաղութներից և որով պայմանավորված է Աստրախանի գաղութի բացառիկ դերը հայ ազատագրական շարժման մեջ։

Ցանկալի կլիներ, որ Վ. Խաչատրյանը հիշատակեր նաև ռուս մեծ գիտնական և քաղաքական գործիչ Վ. Ն. Տատիշչևի անունը, որը 1741—45 թթ. Աստրախանի նահանգապետն էր, և մեծ նպաստ էր բերել հայ-ռուսական հարաբերությունների զարգացմանն ու ամրապնդմանը։

Ռուսահայ գաղթօջախներին է վերաբերում նաև Ժ. Հ. Անանյանի «Հայկական գաղթավայրերի հիմնումը Սև ծովի հյուսիսային շրջաններում և հայ ազատագրական շարժումը 18-րդ դարի վերջին երեսնամյակում» հոդվածը։ Անանյանը ուսումնասիրել է բազմաթիվ փաստաթղթեր և հետաքրքիր հետևություններ է անում հայ գաղութների կյանքի մասին, որոնք բխում են Նովորոսիայի բնակեցման ու երկրամասի յուրացման ուղղությամբ Ռուսաստանի պետական քաղաքականության էությունից։ Մատենադարանից և այլ արխիվներից քաղված նյութերի հիման վրա հեղինակը վերլուծում է Լազարյանների, Հովսեփ Արղությանի, «Արարատյան դեսպան» Ստեփան Դավթյանի գործունեությունը և եզրակացնում, որ հայերի վերաբնակեցումը Ռուսաստանում նրանք դիտում էին որպես հայկական ապագա ինքնուրույն պետություն ստեղծելու ծրագրի մի մաս։ Սա հետաքրքիր և ուշադրության արժանի տեսակետ է։

Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերիս և հայ-ռուսական հասարակական-քաղաքական հարաբերությունների համակարգում նրանց դերին է նվիրված Լ. Ա. Պողոսյանի ուսումնասիրությունը։ Հեղինակը ճիշտ է նկատում, որ Պետրոս Մեծի իրանական արշավանքը «շրջադարձային եղավ Կովկասյան ժողովուրդների կյանքում» (էջ 155) և ազդակ հանդիսացավ նաև Հյուսիսային Կովկասի հայկական գաղթավայրերի առաջացման համար։ Լ. Պողոսյանը հատուկ ուշադրություն է դարձնում Կովկասում թուրքական ագրեսիայի լուսաբանմանը, նկատելով, որ հայ ազատագրական շարժման գործիչները, դաշնակցելով Ռուսաստանի հետ, հետապնդում էին նաև թուրքական ագրեսիայի կանխման նպատակը։ Հաշողությամբ համակարգելով այդ գաղութներին վերաբերող ցրված բազմաթիվ նյութերը, հեղինակը տալիս է Դերբենդի, Ղզլարի, Սուրբ Խաչի, Մոզդոկի, Գեորգիևսկի և այլ վայրերի գաղթօջախների ձևավորման և դրանց ազգային ու սոցիալ-տնտեսական կյանքի պատմությունը, հատկապես առանձնացնելով դրանց դերը հայկական ազատագրական շարժման մեջ։ Ելնելով նշված գաղթավայրերի աշխարհագրական դիրքից, Լ. Պողոսյանը հանգում է այն ճիշտ հետևությանը, որ դրանք «միջանկյալ, կապող օղակ են հանդիսացել Ռուսաստանի, այնտեղ բնակվող հայ համայնքների և Անդրկովկասի՝ մասնավորապես մայր Հայաստանի միջև» (էջ 168)։

Վ. Բ. Բարխուդարյանը «Ռուսաստանի և Հնդկաստանի հայկական գաղութները 18-րդ դարի վերջին քառորդի հայ ազատագրական շարժումներում» հոդվածում չի անդրադառնում այդ գաղութների պատմության արդեն ուսումնասիրված հարցերին, քննում է միայն Ռուսաստանի և Հնդկաստանի հայ գաղթօջախների համագործակցության պրոբլեմը հայ ազատագրական շարժումներում։ Նշելով ռուսահայ և հնդկահայ գաղութների առանձնահատկությունները, դրանց առաջացման և զարգացման միանգամայն տարբեր բնապատմական պայմանները, նա ուսումնասիրության շեշտը տեղափոխում է երկու գաղութների համար բնորոշ ընդհանուր գծերի՝ հայ ազատագրական պայքարի վրա, ընդգծելով, որ «բոլորն էլ Ռուսաստանի հետ էին կապում հայկական պետականության վերականգնումը» (էջ 192)։ Սերտորեն շաղկապելով հնդկահայերի ազատագրական գաղափարախոսությունը եվրոպական լուսավորականության հետ, հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես էր դրսևորվում հնդկահայ գաղափարախոսության դեմոկրատական ոգին ռուս-հնդկահայ հարաբերություններում և Հայաստանի ազատագրման՝ ծրագրերում։ Ճիշտ տարբերակելով ռուսահայերի և հնդկահայերի ազատագրական շարժման սոցիալական ոգին, միևնույն ժամանակ նշում է դրանց մի շարք ընդհանրությունները. ձգտումը՝ լուսավորել և ինքնաճանաչման բերել ժողովրդին և համախմբել նրան ազատագրական պայքարում։ Հետաքրքրական են հնդկահայ գաղութի կողմից ռուսահայ գաղութներին ցույց տրվող օգնությանը նվիրված էջերը, ինչպես նաև՝ Հ. Արղությանի և Շահամիր Շահամիրյանի գործարար կապերին վերաբերող փաստաթղթերը։

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ Վ. Բարխուդարյանի այս հոդվածով բացվում է գաղութահայության ուսումնասիրման մի նոր ասպեկտ՝ տարբեր ռեգիոններում գտնվող գաղթօջախների համադրական, զուգահեռ ուսումնասիրությունը՝ կոնկրետ պրոբլեմային կտրվածքով։

Գրախոսվող ժողովածուում ներկայացված է Վ. Ա. Մարտիրոսյանի «Հայ-վրացական համագործակցությունը 18-րդ դարի 80-ական թվականների ազատագրական պայքարում» հոդվածը, որը նվիրված է 1783 թ. հուլիսի 24-ին Գեորգիևսկ ամրոցում կնքված ռուս-վրացական պայմանագրին, հայ գործիչների՝ այդ պայմանագրի հետ առնչություններին, ինչպես նաև՝ ողջ վրացահայության վերաբերմունքին։

Ըստ Վ. Մարտիրոսյանի, վիրահայությունը «լիովին հարեց Ռուսաստանի հովանավո-

ության ներքո անցնելու կողմնակիցների բանակին» (էջ 218), և այդ միտքը համոզիչ ապացուցվում է քննվող պատմական փաստաթղթերի հիման վրա։ Հայ-վրացական հարաբերությունները, Հերակլ թագավորի ճկուն քաղաքականությունը հեղինակը դիտարկում է Թուրքիայի, Պարսկաստանի, Անդրկովկասի խանությունների ու Վրաստանի հարաբերությունների բարդ համակարգում, բացահայտելով ժամանակին հատուկ կնճռոտ երևույթները, մասնավորապես՝ Ղարաբաղի Իբրահիմ խանի և այլ գործիչների երկդիմի վարքագիծը։ Այն հանգամանքը, որ հեղինակը, լավ տիրապետելով վրացերենին, օգտագործել է բազմաթիվ վրացական աղբյուրներ, ակնհայտ է բարձրացնում դրախոսվող հոդվածի արժեքը։

Ժողովածուում իր ուրույն տեղն ունի և կարևոր դիտական հետաքրքրություն է ներկայացնում Վ. Ա. Բայբուրդյանի «Հայաստանի ազատագրման խնդիրը և շուրջհայ առևտրական բուրժուազիան 16—17-րդ դարերում» հոդվածը։ XVI դ. հայ առևտրական դասի նոր վերելքն ու դերը միջազգային առևտրի մեջ, որը, կարելի է համարել, «հայ առևտրական կայսրության» ստեղծում, հեղինակն իրավացիորեն շաղկապում է Թուրքերի՝ Կոստանդնուպոլսի գրավումից հետո ստեղծած նոր միջազգային իրադրության, աշխարհագրական նոր հայտնագործումների, առևտրական նոր ճանապարհների բացման, ինչպես նաև հայ ժողովրդի համար ստեղծված ծանր պայմանների հետ։ Թուրք-իրանական առճակատման ֆոնի վրա տալով շուրջհայ առևտրականների նկատմամբ Շահ-Աբբասի քաղաքականության վերլուծությունը, հեղինակը ցույց է տալիս ոչ միայն նրանց լայն առևտրական գործունեությունը, այլև քաղաքական ակտիվությունը, հակադրվելով մինչ այժմ գրականության մեջ իշխող թեզին՝ շուրջհայ առևտրական դասի պասիվությանը (XVII—XVIII դդ.)։

Համամիտ ենք հեղինակի այն կարծիքին, «որ հայ ազատագրական միտքը ամենից վաղ ծնունդ է առել առևտրական բուրժուազիայի խոշայության շրջանում։ Հենց այս դասն է, որ, աստիճանաբար համակվելով հայ բնաշխարհն ազատագրելու տրամադրություններով, սկսում է տոն տալ նաև այդ նպատակով ձեռնարկվող բանակցություններին» (էջ 99)։ Այս թեզը, հեղինակի այս նոր մոտեցումը, կարևոր նշանակություն ունի մեր ազգային-ազատագրական պայքարի պատմության ճիշտ ըմբռնման համար։

Իհարկե, երբ հայ առևտրական կապիտալը թևակոխեց իր զարգացման առևտրաարդյունաբերական փուլը, դա բոլորովին նոր որակ տվեց նրա քաղաքական վարքագծին, սակայն XVI—XVII դդ. հայ առևտրական կապիտալի ներկայացուցիչներին բացարձակ քաղաքական անտարբերություն վերագրելը, ըստ ամենայնի, սխալ է։ Նշելով իրանահայ վաճառականության երկակի դերությունը այդ ժամանակաշրջանում (տնտեսական համեմատական ազատությունն ու շահերի զուգադիպումը Իրանի տնտեսական շահերին և կրոնական ու ազգային ճնշման տակ գտնվելը, վաճառականի անձի և սեփականության ապահովության բացակայությունը), հեղինակը դիտ է տրամաբանական հետևության. իրանահայ առևտրավաշխառուական դասը չէր կարող դժգոհ չլինել իրանական ավատական լծից և չհասկանալ, «որ հայ ժողովրդի թշվառ դրությունը հետևանք է սեփական պետականության բացակայության» (էջ 105)։

Հեղինակի օգտագործած եվրոպական ճանապարհորդների՝ Տավերնիեի, Տուրնեֆորի, Շարդենի աշխատությունները, ինչպես նաև ֆրանսերեն, անգլերեն և այլ լեզուներով բերված աղբյուրներն ու բազմազան գրականությունը ավելի են հարստացնում այս արժեքավոր ուսումնասիրությունը։

Ս. Ե. Քոլանջյանի «Հայազգի գործիչների մասնակցությունը միջնադարյան Մոլդովայի և Վալախիայի ժողովուրդների հակաօսմանյան պայքարին (XV—XVIII դդ.)» ուսումնասիրությունը կառուցված է բազմաթիվ հայկական, ռումինական, ռուսական և այլ աղբյուրների, ինչպես նաև բազմալեզու հարուստ գրականության հիման վրա և նվիրված է հայազգի գործիչների մասնակցությանը ռումին ժողովրդի հակաօսմանյան պայքարին։ Հեղինակը համոզիչ ցույց է տալիս հայ բնակչության ծանր վիճակը Վալախիայում և Մոլդովայում օսմանյան լծի տարիներին և նրա համատեղ պայքարը ռումին ժողովրդի հետ օսմանյան զավթիչների դեմ, Ս. Քոլանջյանն ուսումնասիրել է հակաօսմանյան պայքարի գործում բազմաթիվ հայազգի գործիչների մեծ ավանդը։ Ուշադրության արժանի են Իսրայել Օրու մասին բերված տվյալները և հեղինակի այն եզրակացությունը, որ Օրու ուղևորությունները Մոլդովա և Վալախիա որոշակի դեր են խաղացել տեղի «հայերի հայրենասիրական տրամադրությունների էլ ավելի կայունացման գործում» (էջ 86), ինչպես նաև Նորահայտ վավերագրերի հիման վրա բերված տվյալները այն մասին, որ Մոլդովահայերը ցանկանում էին ակտիվորեն մասնակ-

ցել Հայաստանի ազատագրական շարժմանը։ Ս. Քոլանջյանի հոդվածը արժեքավոր ներդրում է հայ-ռումինական բարեկամության ուսումնասիրման գործում։

Է. Խ. Թաշիրյանը «Հոլանդահայ գաղութը և հայ ազատագրական միտքը (XVII դ.)» հոդվածում վերլուծելով հոլանդահայ գաղութի ստեղծման նախադրյալները և նրա պատմության համառոտ ակնարկը, շեշտը դնում է գաղութի հոգևոր կյանքի վրա, առանձնացնելով նրա դերը հայ ազատագրական մտքի պատմության մեջ։ Այդ տեսանկյունով քննելով գաղութի պատմությունը, Թաշիրյանը հետապնդում է համայնքի բոլոր խավերի մասնակցությունը հայկական տպարանի և տպագրության ազգանվեր գործին, որը կապված էր Ոսկան Երևանցու, Վանանդեցիների և ականավոր այլ գործիչների անվան հետ։ Հեղինակն ընտրել է ուսումնասիրման երկու կարևոր տեսանկյուն։ Նախ՝ հանգամանորեն վերլուծում է հայ գրականության մնայուն արժեքների հրատարակությունը, որն, իրավացիորեն նպաստել է ժողովրդի ազատագրական պայքարի ոգու պահպանմանը և երկրորդ՝ մեկնաբանում է Վանանդեցիների և հոլանդահայ գաղութի այլ ներկայացուցիչների ազատագրական հայացքներն ու գործունեությունը։ Հետաքրքիր է նաև ղմյուռնահայ Ապրոյան եղբայրների և Պետրոս Մեծի միջև եղած կապերի լուսաբանումը և այդ առիթով բերված փաստաթուղթը։ Անհրաժեշտ ենք համարում, սակայն, նշել, որ Պետրոս Մեծի և Ռուսաստանի հետ Ապրոյան եղբայրների, ինչպես և Հոլանդիայում գործող այլ վաճառականների հարաբերությունների մասին բազմաթիվ ուշագրավ նյութեր կան XVIII դ. ռուս պատմաբաններ Մ. Դ. Զուլկովի, Ի. Գոյիկովի աշխատություններում և ռուսական սկզբնաղբյուրներում, որոնք նույնպես կարելի էր օգտագործել հարցի լուսաբանման համար։

Վերին աստիճանի ուշագրավ են հոլանդահայ գործիչներին և Իսրայել Օրու առնչություններին վերաբերող փաստաթղթերը, որոնք հաստատում են հեղինակի եզրակացությունը, որ «Օրու ռուսական կողմնորոշման ձևավորման մեջ փոքր չի եղել նաև հոլանդահայ գաղութի որոշ ներկայացուցիչների» (էջ 133) դերը և որ «հոլանդահայ գաղթօջախի ներկայացուցիչները ևս անմասն չեն մնացել 17—18-րդ դդ. հայ ազատագրական շարժումների նախապատրաստմանը» (էջ 134)։

Չնայած հոդվածների թեմատիկ տարբերությանը, ժողովածուն ունի մեկ ընդհանուր գաղափար. դա հայ ժողովրդի ազատագրական պայքարն է թուրքական և իրանական լծի դեմ և այդ պայքարի ռուսական կողմնորոշումը։

Վ. Բ. Բարխուդարյանը, առաջաբանում նշելով ռուսահայ գաղութների արտակարգ դերը մեր ազատագրական պայքարում և գաղութահայ գործիչների ռեալիզմը, որի հետևանքով նրանք որդեդրեցին ռուսական կողմնորոշում, ընդգծում է, որ այն «աստիճանաբար հասունացավ, խորացավ և դարձավ հայ ժողովրդի ազատագրման միակ հուսալի և ռեալ ուղին» (էջ 13)։

Վ. Ա. Խաչատրյանը, խոսելով հայ եկեղեցու դիրքորոշման մասին, գրում է. «Հայ եկեղեցու բարձրաստիճան գործիչները, Էջմիածնի կաթողիկոսի գլխավորությամբ, ավելի պարզ գիտակցեցին հայ-ռուսական հարաբերությունների զարգացման բախտորոշ նշանակությունը» (էջ 148)։

Վ. Կ. Ոսկանյանը բացահայտում է հայ-ռուս բարեկամության հիմքը, շեշտելով, որ այն արտահայտում էր «Կողմերի օբյեկտիվ շահերը» (էջ 29) և գնահատելով այդ հարաբերությունները, գրում է. «Վրաստանի և ապա Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միանալը դարձավ պատմական մեծ, բախտորոշ և առաջադիմական իրողություն, որի հսկայական նշանակությունը ավելի տեսանելի է դարձել այժմ՝ 160 տարի հետո» (էջ 45)։ Նույն ոգով է սրակվում ազատագրական պայքարի ռուսական կողմնորոշումը ամբողջ գրքում։

Մենք ապրում ենք վերակառուցման, նոր մտածելակերպի, դեմոկրատիայի և պլյուրալիզմի մի ժամանակաշրջան, երբ վերանայվում են անցյալի քարացած դոգմաները, երբ ուսումնասիրողներին չեն պարտադրում ստանդարտ, ստերեոտիպ և պաշտոնական կարծիքներ, երբ պատմաբանը կարող է անկաշկանդ շարադրել այն, ինչ թելադրում են իր միտքը և խիղճը։ Ժողովածուի հեղինակները, որոնք երկար տարիներ զբաղվել են հայ-ռուսական հարաբերություններով, այսօր վերահաստատում են իրենց հիմնական եզրակացությունները, դրանով իսկ ընդգծելով, որ իրենք անցյալում էլ հիմնվել են պատմական օբյեկտիվ ճշմարտությունների վրա։ Նրանց եզրակացությունները հիմնված են ոչ միայն համոզիչ փաստերի և վերլուծության, այլև մեր մեծերի թողած իմաստուն ժառանգության և ավանդույթների վրա։ Ժողովածուն ամբողջությամբ վերցրած ուշագրավ և արժեքավոր աշխատություն է։

Ռ. Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր